

**«Տեղական ինքնակառավարման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»,
«Երևան քաղաքում տեղական
ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություն և
լրացում կատարելու մասին»,
«Անասնաբուժության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին», «Տեղական տուրքերի և
վճարների մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքում լրացումներ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքների
նախագծեր**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Թ Ը

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337-Ն օրենքի 50-րդ
հոդվածում.

- 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ կետով.

«2) կազմակերպում և իրականացնում է անասնաբուժական ծառայության,
կենդանիների հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման, բուժման և
վերացման միջոցառումների իրականացման, անասնագլխաքանակի ճշգրիտ
հաշվառման, կենդանիների դիակների, խոտանման ենթակա կենդանական
ծագման մթերքի և հումքի մեկուսացման, անասնաբուժական հսկողությամբ

կենդանիների կենտրոնացված սպանդի աշխատանքները:».

- 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 կետով.

«1.1) աջակցում է գյուղատնտեսական կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման, կենդանիների անձնագրերի, անասնաբուժական միջոցառումների գրանցամատյանների վարման աշխատանքներին.».

- 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) անասնահամաճարակային իրավիճակից ելնելով՝ ըստ վարակման ռիսկի, կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների դեմ պայքարի համալիրում սահմանազատում է կենդանիների շարժի ուղիները, արոտավայրերը և ջրելատեղերը՝ անհրաժեշտության դեպքում սահմանափակելով կամ արգելելով դրանց օգտագործումը.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Թ Ը

«ԵՐԵՎԱՆ ԹԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի 58-րդ հոդվածում.

- 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) աջակցում է համայնքի տարածքում հայտարարված կարանտին գոտում կատարվող աշխատանքներին.».

կազմակերպում և իրականացնում է անասնաբուժական ծառայության, կենդանիների հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման, բուժման և վերացման միջոցառումների իրականացման, անասնագլխաքանակի ճշգրիտ հաշվառման, կենդանիների դիակների, խոտանման ենթակա կենդանական ծագման մթերքի և հումքի մեկուսացման, անասնաբուժական հսկողությամբ կենդանիների կենտրոնացված սպանդի աշխատանքները:».

- լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Քաղաքապետն անասնաբուժության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունը.

1) համայնքի տարածքում կատարված անասնահակահամաճարակային միջոցառումների, հայտնաբերված վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում լիազոր մարմնին.

2) կազմակերպում և իրականացնում է անասնաբուժական ծառայության աշխատանքները, գյուղատնտեսական կենդանիների հաշվառումը, կենդանիների հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման, բուժման և վերացման միջոցառումները, կենդանիների դիակների, խոտանման ենթակա կենդանական ծագման մթերքի և հումքի մեկուսացման, վնասագերծման և ոչնչացման, տարածքների ախտահանման, անասնաբուժական հսկողությամբ կենդանիների կենտրոնացված սպանդի աշխատանքները.

3) անասնահամաճարակային իրավիճակից ելնելով՝ ըստ վարակման ռիսկի, կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների դեմ պայքարի համալիրում սահմանազատում է կենդանիների շարժի ուղիները, արոտավայրերը և ջրելատեղերը՝ անհրաժեշտության դեպքում սահմանափակելով կամ արգելելով դրանց օգտագործումը.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Բ Ը

«ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-137-Ն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում՝ «Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել «և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման

օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 19-րդ կետով.

«19) համայնքի վարչական տարածքում համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար:»:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 19-րդ կետով.

«19) համայնքի վարչական տարածքում համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման գումարի չափով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: